ԹԻՎ 34 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

25 մարտի 2023թ.
ք. Գորիս

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16-Ա

«ՔԱՂԱՔԱՑՈՒ ՈՐՈՇՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅՑՈՒՑԻՉ Մ. ԱԶՈՅԱՆԻ 24.03.2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Քաղաքացու որոշում» կուսակցության լիազոր ներկայցուցիչ Միեր Ազոյանի 24.03.2023թ. դիմումը՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

«Քաղաքացու որոշում» կուսակցության լիազոր ներկայցուցիչ Միեր Ազոյանը 24.03.2023թ. ներկայացրել է դիմում՝ Սյունիքի մարզի, Սիսիան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 2023թ. մարտի 26-ի ընտրությունների քարոզարշավի ժամանակահատվածում «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցության կողմից կատարված ընտրական խախտումներն արձանագրելու և «Քաղաքացիական պարմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու կամ այդպիսի պահանջով դատարան դիմելու պահանջի մասին: Դիմումում նշված է.

«1. Դիմումի հիմքում ընկած փաստական հանգամանքները.

Ա. Ապորինի քարոզչական վահանակներ և պաստառներ.

1. Սյունիքի մարզի Սիսիան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 2023թ. մարտի 26-ի ընտրություններին «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցության կողմից Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի՝ Շիրակի, Խանջյան, Մինասյան փողոցներում և Բռնակոթ բնակավայրում էլեկտրական հենասյուների վրա զոդված վահանակների վրա փակցրել են ցուցակի առաջին համար Արմեն Հակոբջանյանի պատկերով:

2.Վերնոշյալ քարոզչական պաստառները եղել են թվով 60 հատ 30 վահանակի վրա (երկկողմանի):

3.Վերնոշյալ քարոզչական պաստառները փակցվել և հանվել են «Մեգանետ Էյչ դի» ՍՊԸ-ին պատկանող տեխնիկա-տրանսպորտային միջոցների կիրառումով:

4. Սիսիանի համայնքապետարանն անպատասխան է թողել թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնարողովի հարցմանը, որով պահանջվել է

ներկայացնել վերոնշյալ վահանակների պատկանելիության և դրանց վրա քարոզչական նյութերի փակցման վերաբերյալ:

5. Վերոնշյալ քարոզչական պաստատները հանվել են 18.03.2023թ., այսինքն՝ քարոզարշավի 18-րդ օրը:

6.Քարոզարշավը տևում է 24 օր:

7. Ի պատասխան թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հարցման «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցության ներկայացուցիչը պատասխանել է, որ իրենք տեղյակ չեն այդ պաստառների և դրանց տնօրինողի մասին:

8. «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցությունը իր «նախընտրական հիմնադրամն կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ» ներկայացված հայտարարագրում որպես Վահանակի ծախս ներկայացրել է 3,300,000 ՀՀդրամ, սակայն «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցությունը այլ՝ օրինակ կարգով ստացված արտաքին գովազդային վահանակի վրա քարոզչական պաստառ չունի: Այլ կերպ ասաց, բացի վերոնշյալ 30 ապօրինի վահանակները, չկան այլ վահանակներ, որոնց վարձակալության կարող է ուղղվել այդ 3,300,000 ՀՀ դրամը:

9. Վերոնշյալ իրավախախտումն արձանագրվել է թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 15.03.2023թ. թիվ 10-Ա որոշմն 3-րդ կետով:

10. Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 15.03.2023թ. թիվ 10-Ա որոշմամբ արձանագրվել է, որ «**Գովազդային վահանակների տնօրինողի անհայտ լինելու պայմաններում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հնարավոր չե ապահովել ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ**»:

11. Վերոնշյալ էլեկտրասյուները հանդիսանում են համայնքային սեփականություն՝ համաձայն ՀՀ Սրունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 24.06.2022թ. թիվ 14-Ա որոշման հավելված 2-ի:

12. Տվյալ էլեկտրասյուները վարձակալության տրամադրելու վերաբերյալ ավագանու որոշում առկա չե:

13. «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համարը հանդիսանում է Սիսիան համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը, 4-րդ և 61-րդ համարները՝ նրա տեղակալները, որոնք ի պաշտոնե պետք է համայնքում արտաքին գովազդի թույլտվություններ տրամադրեին, իսկ առանց թույլտվության նման գովազդի տեղադրման դեպքում հարուցեին համապատասխան վարչական վարույթներ:

Բ. «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցությանը պատկանող «Civic.am» զանգվածային լրատվության միջոցի կողմից Ընտրական օրենսգրքի 20.1 պահանջի խախտման մասով.

14. Civic.am զլմ-ն պատկանում է «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցությանը (հիմք՝ 21.02.2023թ. ԿԸՀ ներկայացված. Civic.am-ի հավատարմագրման հայտ):

15. Civic.am-ը պաշտոնական քարոզարշավի ընթացքում հանդես է եկել հետևյալ **խտրական** և **կողմնակալ** հրապարակումներով.

- **«Եկեք լինենք միասնական, հավատանք ինքներս մեզ, դառնանք «մենք», և ամեն ինչ լավ է լինելու. Սիսիանում մեկնարկել է ՔՊ նախընտրական քարոզարշավը** վերնագրով, առկաէ Civic.am մաշտոնական կայքում՝ 10.03.2023 թվականի թվագրումով՝
- https://civic.am/politics/58164-sisianum-meknarkel-e-naxyntrakan-qarozarshavy.html?fbclid=IwAR3wbbe56n409KsZjPaqHsKmN5JFoy2bIJKd75oRtXZMb6iGS2alHoO9qC0 հղումով:
- **Միասնաբար պետք է լուծենք մեր համայնքի առջև ծառացած բոլոր խնդիրները.**
- **Սիսիանում քարոզարշավն ակտիվ փուլում է** վերնագրով՝ 10.03.2023 թ, առկա է ՀԼՄ-ի պաշտոնական կայքում https://civic.am/politic/58600-sisianum-qarozarshavn-aktiv-pulum-e.html?fbclid=IwAR3ri5n8QARLp2N-eDfdckHwAJcAGsgSAMqY1Za06ufhJ9vwYn2UURy1Do հղումով:
- **30 տարի Սիսիանը անտեսված է եղել, հիմա վերջապես մեր վրա էլ է << արև կպել>>. Սիսիանում տնթանում է ՏԻՄ քարոզարշավը** վերնագրով՝ 19.03.2023թ., https://civic.am/politics/58886-sisianum-yntanum-e-tim-qarozarshavy.html հղումով:
- **Էդ Ճանապարհը իրոք երազանքը էր, լուսավորությունը եղավ, ջրագիծը անցկացվեց, նման բան ո՞վ էր տեսել. ՔՊ-ն շարունակում է քարոզարշավը Սիսիանում** վերնագրով՝ 21.03.2023թ-ի https://civic.am/politic/59112-sisianum-qarozarshavy-sharunakvum-e.html հղումով:
- **Արմեն Հակոբջանյանը պետք է ընտրվի, ուրիշ թեկնածու չեմ տեսնում. Բռնակոթցին՝ Սիսիանում սպասվող ընտրությունների մասին՝ 23.03.2023թ.** https://civic.am/politic/59921-armen-hakobjanyan.html
- **«3-4 տարի հետո չեն լինելու առանց ասֆալտի, ջրի և փողոցային լուսավորության գյուղեր». Սիսիանում շարունակվում է ՔՊ քարոզարշավը՝22.03.23թ.** https://civic.am/politic/59692-armen-hakobjanyan.html
- **Սիսիանում համայնքապետի «ՔՈ»-ի թեկնածուն ՎՏԲ-ի մասնաճյուղի կառավարիչն է, որի պաշտոնավարման ընթացքում նրա ենթակաները բանկում գրավադրված ոսկիները յուրացրել են ու գրավադրել այլ բանկերում, փոխարենը ՎՏԲ-ում պղինձ թողնելով՝ 22.03.2023** https://civic.am/politic/59915--html

16. Civic.am-ը Facbook սոցիալական կայքում վճարովի գովազդ է միացրել հետևյալ կողմնակալ և խտրական նյութերի առաջխաղացման (promotion) համար.

- **Միասնաբար պետք է լուծենք մեր համայնքի առջև ծառացած բոլոր խնդիրները. Սիսիանում քարոզարշավը ակտիվ փուլում է** վերնագրով՝ 10.03.2023թ, առկա է ՀԼՄ-ի պաշտոնական կայքում https://civic.am/politic/58600-sisianum-qarozarshavn-aktiv-pulum-e.html?fbclid=IwAR3ri5n8QARLp2N-eDfdckHwAJcAGsgSAMqY1Za06ufhJ9vwYn2UURy1Do հղումով:
- **Սիսիանում համայնքապետի «ՔՈ»-ի թեկնածուն ՎՏԲ-ի մասնաճյուղի կառավարիչն է, որի պաշտոնավարման ընթացքում նրա ենթակաները բանկում գրավադրված ոսկիները յուրացրել են ու գրավադրել այլ բանկերում, փոխարենը ՎՏԲ-ում պղինձ թողնելով՝ 22.03.2023** https://civic.am/politic/59915-- html

17. Վերոնշյալ վճարովի գովազդը վճարվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից (civil contract) (հիմք՝ սքրինշոթ): Չի արտացոլվել նախընտրական հիմնադրամի միջոցների ծախսերում:

18. Վերոնշյալ քարոզչական նյութերի վրա տողադրված չի եղել և չէ «Նախընտրական քարոզչություն» նշումը և նշված չի նյութի պատվիրատուի անվանումը, ինչը ուղղակիորեն շփոթության մեջ է գցում ընտրողներին՝ ստեղծելով տպավորություն, թե նյութը տարածվում է անկախ լրատվամիջոցի միջոցով:

19.Վերոնշյալ նյութերը տեղադրված են մինչ սույն դիմումի ներկայավման պահը քարոզարշավի 24-րդ օրը:

20. «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Արմեն Հակոբջանյանը իր պաշտոնական Facbook օգտահաշվով տարածել է «Եկեք լինենք միասնական, հավատանք ինքներս մեզ, դառնանք «մենք», և ամեն ինչ լավ է լինելու. Սիսիանում մեկնարկել է ՔՊ նախընտրական քարոզարշավը վերնգրով, առկաէ Civic.am պաշտոնական կայքում՝ 10.03.2023 թվականի թվագրումով՝ https://civic.am/politics/58164-sisianum-meknarkel-e -naxyntrakan-qarozarshavy.html?fbclid=IwAR3wbbe56n409KsZjPaqHsKmN5JFoy2blJKd75oRtXZMb6iGS2alHoO9qC0 հղումով >> նյութը, որը նույնպես վչարվել է «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցության կողմից և այս պահին ունի 38500 դիտում

(https://www.facebook.com/10084785814427/videos/1639585806471417):

Գ. «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցությունն օգտագործել է վարչական ռեսուրս.

21. «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցության նախընտրական հանդիպումներին օգտագործվել է Սիսիան համայնքին պատկանող " Toyota HIIIux 2.7'' մակնիշի 227 LL 70 պետհամարանիշի մեքենան (կցվում են ֆոտո և վիդեո ֆայլեր):

Դ. «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Արմեն Հակոբջանյանի կողմից որպես համայնքի ղեկավարի պաշտոնակատար ներկայանալը.

22. Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 21.03.2023թ. թիվ 12-Ա որոշմամբ հանձնաժողովը արձանագրվել է, որ «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցության ընտրական ցուցակի 1-ին համար Արմեն Հակոբջանյանը իր կողմից իրականացվող նախընտրական հանդիպումներում պետք է զերծ մնա որպես համայնքի ղեկավարի պաշտոնակատար ներկայանլուց թեև իրազեկվել է, որ նա գտնվում է արձակուրդում:

II. ԴԻՄՈՒՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

23. ՀՀ սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ «Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, **հավասար**, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ»:

24. ՀՀ Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ «1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին **հավասար** հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են **հանրային ռեսուրսներից** օգտվելու, քարոզչություն իրականացնելու և **ֆինանսական թափանցիկությունն** ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները»:

25. ՀՀ ընտրական օրենսգրքի 20.1 հոդվածի «*Համացանցում գործող զանգվածային լրատվության միջոցները, ինչպես նաև համացանցային կայքի իրավատեր հանդիսացող անձինք նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների(կուսակցությունների դաշինքների) համար ապահովում են ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ*

2. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում համացանցում, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով, նախընտրական քարոզչությանը վերաբերող՝ վճարովի հիմունքներով գովազդային նյութեր և տեսանյութեր կարող են տեղադրվել միայն թեկնածուի, կուսակցության կամ նրա ներկայացուցչի հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա՝ նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին:

*3. Նախընտրական քարոզչական նյութերի հրապարակումը պետք է ուղեկցվի «Նախընտրական քարոզչություն» լուսագրով, իսկ քարոզչական տեսանյութերի դեպքում՝ տեսանյութի վրա տեղադրվող «**Նախընտրական քարոզչություն**»՝ անընդմեջ ուղեկցվող լուսագրով: Նախընտրական քարոզչական նյութերի և տեսանյութերի հրապարակումը պետք է տեղեկություններ պարունակի պատվիրատուի վերաբերյալ:»*

26. ՀՀ ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն «*1. Թեկնածուները, ընտրություններին մասնակցող*

կուսակցությունները նախընտրական քարոզչության նախապատրաստման, կազմակերպման և իրականացման հետ կապված ծախսերն իրականացնում են նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին են կատարվում՝

1) զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման ծախսերը.

2) համացանցով նախընտրական քարոզչության իրականացման, այդ թվում՝ քաղաքական գովազդի հրապարակման ծախսերը. »

27. Տվյալ պարագայում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը պատկանող Civic.am զլմ-ն տեղադրել է թվով 7 կողմնակալ և խտրական քարոզչական նյութ՝ առանց նշելու, որ դա «Նախընտրական քարոզչություն» է և պատվիրատուն հանդիսանում է « Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը:

28. Բացի այդ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը չի հայտարարագրել իր կողմից Facebook սոցիալական կայքում Civic. am-ի վերոնշյալ նյութերի գովազդային ծախսը:

29. ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Հանրության համար տեսանելի քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են փակցվել միայն՝

1) հատուկ այդ նպատակով առանձնացված տեղերում, վճարովի գովազդային վահանակներում, ընտրական շտաբների վրա.

2) ֆիզիկական անձանց համաձայնությամբ՝ նրանց պատկանող կամ նրանց տիրապետման ներքո գտնվող շենքերի, շինությունների (բացառությամբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, հանրակրթական դպրոցների, բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի, հասարակական սննդի կամ առևտրի օբյեկտների), տրանսպորտային միջոցների (բացառությամբ հասարակական տրանսպորտի և տաքսու) վրա կամ դրանց ներսում: Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի վրա քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսացող տարածքում (այդ թվում՝ պատշգամբներում, պատուհանների վրա և այլն) կամ արտաքին պատերին տեղադրված վճարովի գովազդային վահանակների վրա:»

30. Տվյալ պարագայում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից Սիսիան քաղաքի՝ Շիրակի, Խանջյան, Մինասյան փողոցներում և Բռնակոթ բնակավայրում էլեկտրական հենասյուների վրա զոդված թվով 30 վահանակների վրա ապօրինաբար (առանց իրավական հիմքի, որն արձանագրվել է ՏԸՀ կողմից) փակցրել են թվով 60 հատ քարոզչական պաստառներ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Արմեն Հակոբջանյանի պատկերով:

31. ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-ին մասի համաձայն՝«*Վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, որը պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:*

Արգելվում է նախընտրական քարոզչություն կազմակերպելը կամ կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, ***տրանսպորտային և կապի միջոցները****, նյութական ու մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը(….)»*

32. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական հանդիպումներին օգտագործվել է Սիսիան համայնքին պատկանող «Toyota Hillux 2.7» մակնիշի 227 ԼԼ 70 պետհամարանիշի մեքենան(կցվում են՝ ֆոտո և վիդեո ֆայլեր):

33. ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն «*Եթե առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի* ***այնպիսի խախտում****, որը կրում է* ***շարունակական բնույթ****, և թույլ տրված խախտումը կարող է* ***էական ազդեցություն ունենալ*** *ընտրությունների արդյունքների վրա, կամ թույլ տրված խախտման հետևանքները հնարավոր չէ վերացնել, և թույլ տրված խախտումը կարող է* ***էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա****, ապա թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: Դատարանը թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած կարող է ճանաչել, եթե հանգում է այն եզրակացության, որ խախտումը կատարվել կամ ուղղորդվել է թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից»:*

34. Տվյալ պարագայում «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցությանը և «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Արմեն Հակոբջանյանը թույլ են տվել նախընտրական քարոզչության կարգի շարունակական բնույթ կրող և ընտրությունների հնարավոր արդյունքների վրա էական ազդեցություն թողնող խախտումներ, իսկ նշված խախտումների հետևանքները այլևս հնարավոր չէ վերացնել: 35. Մասնավորապես՝

ա/ Նախընտրական քարոզչության 24-օրյա ժամանակահատվածից 18-ի ընթացքում Սիսիան համայնքում ապօրինաբանր տեղադրված են եղել թվով 60 պաստառներ:

բ/ 15.03.2023թ. թիվ 10-Ա որոշմամբ արձանագրվել է,որ <<**Գովազդային վահանակների տնօրինողի անհայտ լինելու պայմաններում նախընտրական քարողչության ժամանակահատվածում հնարավոր չէ ապահովել ընտրություններին մասնակցող կուցակցությունների համար ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ**>>:

գ/ Ընտրություններին մասնակից «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցությանը պատկանող . Civic.am գլմ-ն մինչև օրս էլ խախտելով նախընտրական քարոզչության կարգը չի ապահովել բնույթով խտրական և կողմնակալ նյութերի վրա անընդմեջ <<Նախընտրական քարոզչություն>> նշումն ու պատվիրատուի անվանումը, այդպիսով մոլորության մեջ գցելով ընտրողներին, թե իբև անկախ լրատվամիջոցը դրական

գնահատականներ է տալիս «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցությանը և նրա ընտրական ցուցակի առաջին համարին և բացասական գնահատականներ՝ մրցակիցներին: Այսպիսի խախտումն ունի այնքան լայն տարածում և անվերահսկելի ընթացք, որ հնարավոր չէ կանխել և շտկել այդպիսի էական բացասական ազդեցությունը ընտրողների ներքին ընկալման վրա:

դ/ «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցության կողմից ընտրական հանդիպումներին Սիսիան համայնքին պատկանող ″ Toyota HIIIux 2.7'' մակնիշի 227 LL 70 պետհամարանիշի մեքենան օգտագործելը տեղի է ունեցել պարբերաբար և այդպիսի խախտման հետևանքները վերացնելը նույնպես հնարավոր չէ:

ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ <<11. Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի, ընտրություններին մասնակցող կուցակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի գրանցումն անվավեր կամ **ուժը կորցրած ճանաչելու մասին դիմում կարող է ներկայացվել միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով**: Դիմումը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:

Գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումը ընտրական հանձնաժողովը քննարկում և դրա վերաբերյալ որոշում է ընդունում դիմումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ քան քվեարկության նախորդ օրը մինչև ժամը 12-00-ն:

Սույն մասի առաջին պարբերությամբ նշված որոշումը կարող է բողոքարկվել վարչական դատարան 3 օրացուցային օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին, սակայն ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը ՝ մինչև ժամը 18.00-ն: Վարչական դատարանը որոշում է կայացնում 5 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան քվեարկության նախորդ օրը»:

III Պահանջը

Ելնելով ողջ վերոգրյալից

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

1. Վերոնշյալ փաստական հանգամանքների շրջանակներում արձանագրել, որ «Քաղաքացիական պայմանագիր» խախտել է ՀՀ ընտրական օրենսգրքի 20.1, 21-րդ հոդվածի 5-րդ, 23-րդ հոդվածի 1-ին մասի և 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի խախտումներ:
2. Ուժը կորցրած ճանաչել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն կամ նման պահանջով դիմել դատարան:»:

2. Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը դիմումում նշված փաստական հանգամանքների հետ կապված մի շարք հարցերին անդրադարձել է 2023 թվականի մարտի 15-ի, թիվ 10-Ա որոշմամբ, մարտի 21-ի, թիվ 12-Ա որոշմամբ և արձանագրել է, որ նշված որոշումների համար հիմք հանդիսացած դիմումներում արծածված համգամանքներում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից Ընտրական օրենսգրքի 20.1, 21-րդ հոդվածի 5-րդ, 23-րդ հոդվածի 1-ին մասի և 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի խախտումները չեն արձանագրվել:

Ինչ վերաբերում է դիմումի 16-րդ կետում նշված հանգամանքին. «Civic.am-ը Facbook սոցիալական կայքում վճարովի գովազդ է միացրել հետևյալ կողմնակալ և խտրական նյութերի առաջխաղացման (promotion) համար.», ապա Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն նախընտրական քարոզչության՝ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի խախտումը պետք է կատարված լինի ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից, որը հիմք կհանդիսանար դատարան դիմելու համար: Դիմումատուն ինքը նշում է, որ ենթադրյալ խախտման սուբյեկտը Civic.am համացանցային կայքն է:

Ինչ վերաբերում է դիմումի 17-րդ կետում նշվածին. «Վերոնշյալ վճարովի գովազդը վճարվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից (civil contract) (հիմք՝ սքրինշոթ): Չի արտացոլվել նախընտրական հիմնադրամի միջոցների ծախսերում:», որևէ ապացույց ներկայացված չէ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն.

«7. Ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության՝ սույն օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի պահպանումը: ***Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից այդ կարգի խախտման դեպքում*** թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու

նպատակով կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ, որը չի կարող գերազանցել 3 օրը: Թեկնածուն, ընտրություններին մասնակցող կուսակցությունը պարտավոր են որոշմամբ նշված ժամկետում վերացնել խախտումը (խախտման հետևանքները) և այդ մասին գրավոր տեղեկացնել ընտրական հանձնաժողովին:»:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն.

«8. Եթե առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտում, որը կրում է շարունակական բնույթ, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, կամ թույլ տրված խախտման հետևանքները հնարավոր չէ վերացնել, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, ապա թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: Դատարանը թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած կարող է ճանաչել, եթե հանգում է այն եզրակացության, որ խախտումը կատարվել կամ ուղղորդվել է թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից:»:

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վկայակոչված իրավանորմը, թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ընտրական հանձնաժողովը կարող է դիմել դատարան՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար, եթե առկա են հետևյալ պայմանները՝

ա) առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի շարունակական բնույթի խախտում և այդ թույլ տրված խախտումը ***կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա.***

բ) առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում, որի հետևանքները հնարավոր չէ վերացնել, և թույլ տրված խախտումը ***կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա:***

Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցության կողմից ընտրական հանդիպումներին Սիսիան համայնքին պատկանող ″Toyota HIIIux 2.7'' մակնիշի 227 LL 70 պետհամարանիշի մեքենան օգտագործելը տեղի է ունեցել պարբերաբար և այդպիսի խախտման հետևանքները վերացնելը նույնպես հնարավոր չէ, ապա ներյակացված լուսանկարներից հնարավոր չէ պարզել նշված մեքենայի գտնվելու ստույգ ժամը, վայրն ու նպատակը: Իսկ կանգնած մեքենայի վարողի վերաբերյալ պնդումներն անհիմն են:

Երկու դեպքում էլ կարևոր նշանակություն է ձեռք բերում ընտրությունների արդյունքների վրա խախտման ազդեցության գնահատումը, քանի որ կուսակցության գրանցումն ուժը կորցրած ճանաչելու ինստիտուտը ծայրահեղ միջոց է և ցանկացած խախտում մեխանիկորեն չի կարող հանգեցնել գրանցումն ուժը կորցրած ճանաչելուն: Ներկայացված դիմումում նշվում են, ըստ դիմումատուի, բացառապես խախտումների բնույթի մասին և առկա չէ որևէ հիմնավորում կամ ապացույց ընտրությունների արդյունքների վրա խախտման ազդեցության գնահատման տեսանկյունից:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Քաղաքացու որոշում կուսակցության լիազոր ներկայցուցիչ Մհեր Ազոյանի 24.03.2023թ դիմումը մերժել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ԹԻՎ 34 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ